

ԳՐԱՆՑՎԱԾ Է
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ
«01» 11 2002 Թ.
ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ԹԻՎ 10202265

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ ՀՐԱՄԱՆ

10 հոկտեմբերի 2002 թվականի N 662

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԴԵՂԵՐԻ ԵՎ (ԿԱՄ) ԴԵՂԱՆՅՈՒԹԵՐԻ
ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԿԱՄ ԱՐՏԱՀԱՆՄԱՆ ՀԱՎԱՍՏԱԳԻՐ ՏԱԼՈՒ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ
ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՑԱՆԿԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2000 թվականի սեպտեմբերի 20-ի "Հայաստանի Հանրապետություն դեղերի եւ դեղանյութերի ներմուծման ու արտահանման կարգը հաստատելու մասին" N 581 որոշմամբ հաստատված "Հայաստանի Հանրապետություն դեղերի եւ դեղանյութերի ներմուծման ու արտահանման կարգի" 10-րդ կետի

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ`

1. Հաստատել Հայաստանի Հանրապետություն դեղերի եւ (կամ) դեղանյութերի ներմուծման կամ արտահանման հավաստագիր տալու համար անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը (հավելված 1):
2. Սույն հրամանի կատարման հսկողությունը հանձնարարել Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության դեղորայքային եւ տեխնոլոգիական ապահովման վարչության պետ Ա. Բիշարյանին:

ՀԱՎԵԼՎԱԾ 1

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
Հայաստանի Հանրապետության
առողջապահության նախարարության
2002 թվականի հոկտեմբերի 10-ի
N 662 հրամանով

ՑԱՆԿ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԴԵՂԵՐԻ ԵՎ ԴԵՂԱՆՅՈՒԹԵՐԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ
ԿԱՄ ԱՐՏԱՀԱՆՄԱՆ ՀԱՎԱՍՏԱԳԻՐ ՏԱԼՈՒ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ**

1. Հայաստանի Հանրապետություն դեղերի եւ (կամ) դեղանյութերի առևտրային ներմուծում կամ արտահանում իրականացնելու նպատակով իրավաբանական անձը կամ անհատ ձեռնարկատերը Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն է ներկայացնում`
 - 1.1. հայտ սահմանված ձեւի (հավելված 2).
 - 1.2. համապատասխան գործունեություն իրականացնելու լիցենզիայի պատճենը.
 - 1.3. դեղերի եւ (կամ) դեղանյութերի ձեռք բերման պայմանագիրը` ստորագրված եւ կնքված կողմերի կողմից (բնօրինակը եւ պատճենը).
 - 1.4. հաշիվ-ապրանքագիր, կնքված մատակարարի կողմից (բնօրինակը եւ պատճենը).
 - 1.5. ապրանքափոխադրման բեռնագիր (բնօրինակը եւ պատճենը).
 - 1.6. դեղի եւ (կամ) դեղանյութի յուրաքանչյուր խմբաքանակի որակի հավաստագիր` տրված արտադրող կազմակերպության կողմից: Միջնորդ կազմակերպու-

թյուններից դեղերը եւ (կամ) դեղանյութերը ձեռք բերելու դեպքում, արտադրող կազմակերպության կողմից տրված որակի հավաստագիրը պետք է կնքված լինի միջնորդ կազմակերպության կնիքով (բնօրինակը եւ պատճենը)։

1.7. դեղաբույսերի արդյունաբերման եղանակով արտահանման դեպքում Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության կողմից տրված արտահանման թույլտվություն։

2. Հայաստանի Հանրապետություն դեղերի պետական գրանցման, գիտաժողովների, ցուցահանդեսների եւ այլ նմանատիպ միջոցառումների համար նախատեսված նմուշների ներմուծում իրականացնելու նպատակով Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն է ներկայացվում՝

2.1. հայտ սահմանված ձեւի (հավելված 2)։

2.2. հաշիվ-ապրանքագիր, կնքված մատակարարի կողմից (բնօրինակը եւ պատճենը)։

2.3. դեղերի եւ (կամ) դեղանյութի յուրաքանչյուր խմբաքանակի որակի հավաստագիր, պարտադիր նշելով ներմուծվող խմբաքանակի սերիան։

2.4. ապրանքափոխադրման բեռնագիր (բնօրինակը եւ պատճենը)։

3. Հայաստանի Հանրապետություն դեղերի եւ (կամ) դեղանյութերի մարդասիրական օգնության կարգով ներմուծում կամ արտահանում իրականացնելու նպատակով Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն է ներկայացվում՝

3.1. հայտ սահմանված ձեւի (հավելված 2)։

3.2. Հայաստանի Հանրապետության կառավարության մարդասիրական օգնության կենտրոնական հանձնաժողովի որոշումը տվյալ կազմակերպության ծրագիրը բարեգործական որակելու մասին։

3.3. հաշիվ-ապրանքագիր, կնքված մատակարարի կողմից (բնօրինակը եւ պատճենը), պարտադիր նշելով ներմուծվող խմբաքանակի սերիան, քանակը եւ պիտանիության ժամկետը։

3.4. ապրանքափոխադրման բեռնագիր (բնօրինակը եւ պատճենը)։

3.5. առաքող երկրում տվյալ արտադրանքի գրանցման հավաստագիրը։

3.6. դեղերի եւ (կամ) դեղանյութերի տվյալ խմբաքանակի որակի հավաստագիրը։

4. Հայաստանի Հանրապետություն դեղերի կլինիկական եւ նախակլինիկական հետազոտությունների համար նախատեսված նմուշների ներմուծում ու արտահանում իրականացնելու նպատակով Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն է ներկայացվում՝

4.1. հայտ սահմանված ձեւի (հավելված 2)։

4.2. հաշիվ-ապրանքագիր, կնքված մատակարարի կողմից (բնօրինակը եւ պատճենը), պարտադիր նշելով ներմուծվող խմբաքանակի սերիան, քանակն ու պիտանիության ժամկետը։

4.3. դեղերի եւ (կամ) դեղանյութերի տվյալ խմբաքանակի որակի հավաստագիրը՝ տրված արտադրող կազմակերպության կողմից։

4.4. ապրանքափոխադրման բեռնագիր (բնօրինակը եւ պատճենը)։

4.5. կլինիկական եւ նախակլինիկական հետազոտությունների մասին թույլտվությունը՝ տրված Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության կողմից (բնօրինակ եւ պատճենը)։

5. Բոլոր փաստաթղթերի բնօրինակները վերադարձվում են հայտատուին։

Հայաստանի Հանրապետության
Առողջապահության նախարար

անունը, ազգանունը

իրավաբանական անձի կամ անհատ
ձեռնարկատիրոջ անվանումը, գտնվելու վայրը

ՀԱՅՏ N

ք. Երևան " ____ " _____ 200 թ.

Խնդրում եմ տալ _____ հավաստագիր
ներմուծման կամ արտահանման

մատակարար (արտահանման) երկիրը եւ կազմակերպությունը

դեղերի եւ (կամ) դեղանյութերի անվանումը

համար՝ համաձայն կից փաստաթղթերի:

Կից ներկայացնում եմ հետևյալ փաստաթղթերը

1. Համապատասխան լիցենզիայի պատճենը
2. Դեղերի եւ (կամ) դեղանյութերի ձեռք բերման պայմանագիրը

պայմանագրի համարը, ամսաթիվը

3. Դեղերի եւ (կամ) դեղանյութերի ձեռք բերումը հաստատող փաստաթղթեր
(հաշիվ/ապրանքագիր)

փաստաթղթի անվանումը, համարը, ամսաթիվը

4. Դեղերի եւ (կամ) դեղանյութերի տվյալ խմբաքանակի որակը հավաստող
փաստաթղթերը:

5. Դեղերի եւ (կամ) դեղանյութերի փոխադրման բեռնագիր

փաստաթղթի անվանումը, համարը, ամսաթիվը

Հայտնում եմ, որ ներկայացված փաստաթղթերը եւ նրանցում բերված
տեղեկությունները ճիշտ են, որի համար ստորագրում եմ:

(կազմակերպության տնօրենի կամ անհատ (ստորագրությունը))

ձեռնարկատիրոջ ստորագրությունը, _____
անունը, հայրանունը, ազգանունը)

Կ.Տ.